

Վ. Գ. ՍՎԱՅԼՅԱՆ, կիլիկիա. արևմտաեանոց բանավար ավանդութիւնը, 22 ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Ե., 1994, 408 էջ: Մեծ եղեռն, արևմտաեանոց բանավար վկայութիւններ, 22 ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Ե., 1995, 224 էջ: Մեծ եղեռնը արևմտաեանոց հայապատմութեամբ և քրիստոնէական արժեքներով, 22 ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Ե., 1997, 32 էջ:

Մեկ տասնամյակ է անցել այն ժամանակից, երբ հանրապետութեան և սփյուռքի բազմաթիւ թերթերու և ամսագրերու, ղիտական տարրեր տեղեկատուներ ավատում էին Վերսիլի Սվազլի-յանի «Մուսա չես» բանայոյսական ստեղծարածավալ ու բազմարժանողական ժողովածոյի ծնունդը: Վերսիլի ժողովածոյի ղիտարկումից երևում էր, որ հեղինակը չի ավարտել իր ասելիքը, այն ունի շարունակութիւն, քանի որ արևմտաեանոց մշակութային բազմա-րնույթ կողմերի վերահանման խնդիրները տակաւին ստեղծագործական լուծման ճանապարհին էին: Հեղինակը ղեկուս 1950-ական թվականներէ սկսած՝ շարունակում էր պրպտել, փրկել, նոր կյանքի կոչել Մեծ եղեռնից վերապրած, արևմտաեան տարրեր շրջաններէ տարագրված, Հայաստանում բնակութիւն հաստատած հայրենադարձների հողում անթեղված հողերը նշխար-ները:

Այսօր սեղանի վրա է Վերսիլի Սվազլիանի մի նոր արժեքավոր աշխատութիւնը, որի վեր-հագիրն իսկ՝ «Կիլիկիա. արևմտաեանոց բանավոր ավանդութիւնը», վկայում է, որ աշխա-տութեան մէջ ընդգրկված է ոչ միայն Կիլիկիայի, այլև Անատոլիայի հայութեան բանավոր մշակութային կյանքն իր բազմարժանողական կողմերով: Խորհրդանշական է, որ Կիլիկիայի մշակութային, մտավոր կյանքը լուսարանող այս աշխատութեան հրատարակման հովանավոր-րութիւնը ստանձնել է ներկայիս Ամենայն Հայոց կաթողիկոս, իսկ այնքան ղեկուս Մեծի Տանն Կիլիկիայի կաթողիկոս Ն. Ս. Օ. Տեր-Տեր Գարեգին Բ-ն:

Կիլիկիայի մշակութային բնագավառներից եւոյնիսկ մեկի վերահանման խնդրին ձեռնամուխ լինելը պահանջում է մեծ ջանքեր, քանի որ Կիլիկիան պարունակում էր բազմաթիւ զավառ-ներ, ուներ տարաբնույթ ազգարենակութիւն, յուրաքանչեւ քաղաքական կյանքի պայմաններու Երկրի քաղաքական անկումը բնավ վերջնական կորուստ չէր Կիլիկիայի համար: Այդ մեծ պետութեան բարոյական փրկութեան խարխախ ևն դարձել նրա ինքնատիպ նյութական ու հո-գեոր մշակութիւնը վերահանելու, նոր կյանքի կոչելու մեր անցյալ ու ներկա մտավորականու-թեան ջանքերը: Երկրի նկատմամբ ոչ միայն հայ, այլ օտարերկրյա մշակութաբանների հե-տաքրորութիւնը պատահական չէր: Կիլիկիան ուներ զարգացած քաղաքական ու տնտեսական հարաբերութիւններ, բարձր քաղաքակրթութիւն, ինքնատիպ մշակութիւն: Փառահեղ հայրամանակ-ներով, հերոսական ղեպերով, նշանավոր ղեմքերով այն ժամանակ առ ժամանակ քաղաքա-կան ուժի ու փառքի բարձունքներ էր նվաճում: Այս ամենին անդրադարձել է հին և ժամանա-կակից պատմագիտութիւնը:

Սակայն Կիլիկիայի պատմութիւնը, նրա անցած պատմական ուղին, նրա ինքնատիպ կյանքն ու կենցաղը, բառն ու բանն իրենց բազմաբնույթ դրսևորումներով ղոյատենել ևն և անգիր, բանավոր վիճակում: Ժողովրդի հիշողութեանը պահ տված, ժամանակի փորձութիւններ-րին ղեմագրաված այդ բացառիկ նշխարները փրկելը, հայ ժողովրդի, մասնավորապես Կիլի-կիայի և արևմտաեանոց պատմութեան բաց մնացած էջերը լրացնելը մեծ ծառայութիւն ևն ղիտութեանը, և հենց այս առումով է գնահատվում Վերսիլի Սվազլիանի աշխատութեան ղիտաճանաչողական, սկզբնաղբրութիւն, պատմաազգագրական արժեքը: Շուրջ 1500 միավոր ժողովրդագիտական նյութ պարունակող այս ժողովածուն ընդգրկում է ոչ միայն քանակային առումով, այլև բազմաժանր է ու բազմարժանողական: Առաջին անգամ ղիտական շրջանառու-թեան մէջ ևն գրվել արևմտաեանոց ժողովրդագիտական (բանայոյսական, պատմական, բարբառագիտական, ազգագրական, տեղագրական, ժողովրդագրական, երաժշտագիտական) արժեք ներկայացնող տարաբնույթ նյութեր, որոնցից յուրաքանչեւորը յուրովի է նպաստել ձեղինակի կատարած վերլուծումներից բխած և ղրակացութիւններին:

Բարբառային նյութերը գրի ևն առնվել ընդունված ղիտական տառագարութեամբ: Հաշվի առնելով Կիլիկիայի (Ջէլսութեան, Հաճըն, Յընդըջագ, Մուսա լեռ, Քևսար, Բելլան, Այնթապ, Գյոր-թիւլ, Սիս, Տարսն, Աղանա, Մերսին) արղեն իսկ քայքայվող ու անհետացող բարբառների,

ինչպես նաև արևմտահայ որոշ շրջանների (Եղևիսի, Տիգրանակերտ, Բիթլիս, Էրզրում, Վան, Խարբերդ, Քզի, Բսուռ, Մալաթիա, Կեսարիա, Արաստիա, Ցողղատ, Կոնիա, Աֆիոն-Գարա-Տիսար, Աղարաղար, Էսֆիշեհի, Բրուսա, Բիլեջիկ, Նիկոմեդիա, Զմյուռնիա, Չանթալի, Ռոդոս, Կ. Պոլիս), լեզվական առանձնահատկությունները:

Տարբեր բարբառներով բանահյուսական նյութերից բացի, ուշադրությունից շնչ վրիպել նաև այդ հատվածի հայության բանավոր ավանդության մեջ պատկերավոր խոսքի թուրքալեզու, սակայն բացահայտ հայկական ծագմամբ բանահյուսական նմուշները: Այսպիսով, ուսումնասիրության ոլորտ են ընդգրկվել շուրջ հիսուն տարբեր տեղավայրեր, որպեսզի առավել ամբողջական պատկերացում տրվի ողջ արևմտահայության բանավոր ստեղծագործության, նրա հուղարխարհի, մտորումների և իդեոլոգիայի մասին:

Հաշվի առնելով, որ դրամաված նյութերը Կիլիկիայի անցած պատմական ուղու, նրա մշակութային կյանքի անդրադարձն են, վերծիրեն Սվապլյանը, դասախառնելով նյութերն ըստ ժանրերի, միամտամանակ տեղադրել է ժամանակագրորեն, պատմական հաջորդականությամբ: Գիտականաշղթայական կարևոր արժեք է ներկայացնում այնպիսի, այնպիսի առաջնություն տեղ դրած «Պատմարանագիտական տեղեկություններ, որտեղ պատմական փաստերի և իր կողմից դրամաված ժողովրդագիտական տվյալների համադրմամբ հեղինակը խորը վերլուծություններով ներկայացնում է Հայկական Կիլիկիայի և արևմտահայության պատմահասարակական ու քաղաքական կյանքի շրջափոխները՝ սկզբից մինչև մեր օրերը: Նյութերի գրոտման ժամանակաշրջանը, բանասացների սեռատարիքային հատկանիշները լուսարանող համադրական աշխատակները, կիլիկիայի և արևմտահայ որոշ շրջանների ուղեցույց քարտեզը, բազմաբնույթ լուսանկարները, ձայնագրված երգերի նոտագրություններն ավելի են ընդգծում ժողովուրդի ազդեցությունը, պատմագրագրական բնույթը: Մեծ է նաև ժողովուրդի բարբառագիտական արժեքը: Բարբառագիտության պատմությունը հարստանում է աշգ խրթին բարբառների բազմաթիվ էություններով: Մտադրություններն արտացոլող նորահայտ նյութերով: Թառախում տրված են բնագրերում առկա մտտ հարցը դժվարամասց և օտարամուտ բաների բացատրությունները: Ժողովածուն ունի ծանոթագրություններ, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն ամփոփումներ, բանասացների կենսագրական հակիրճ տվյալներ ու տեղագրական համառոտագրություններ:

Բանահյուսական նյութերը գրառելիս հեղինակը առաջնորդվել է ինչպես Գր. Խալաթյանցի և Ստ. Լիսիցյանի մշակած ազգագրական հարցարաններով, նույնպես և բարբառագիտական նյութերի հնչյունաբանական գրանցման ընդունված գիտական համակարգերով (Հր. Աճառյան, Ա. Ղարիբյան, Գ. Զահուկյան):

Հեղինակն օգտվել է նաև արդի բանագիտության մեջ ընդունված բանահյուսական ստեղծագործությունների աշխարհագրական տարածման յուրատիպ քարտեզագրման համակարգից, այն կիրառելով նաև արևմտահայերի ներգաղթի ուղեգրությունները և Հայաստանում նրանց վերաբանակցման տեղավայրերը ցույց տալու նպատակով: Հայրենիքում հայրենադարձների մշակութային ու մասնագիտական զարգացման պատկերը ներկայացնելիս հեղինակը օգտվել է արդի սոցիոլոգիայի մեջ ընդունված վիճակագրական համակարգից և էթնոսոցիոլոգիական տեսական հիմնադրություններից, որոնք հնարավորություն են ընձեռել բացահայտելու ազգագրական տվյալ խմբի կյանքի ու կենցաղի տարբեր կողմերն ու նրանց սոցիալ-մշակութային զարգացման առանձնահատկությունները:

Կիլիկիայի հայության, արևմտահայ այլ ազգագրական շրջանների, ինչպես նաև մերձավոր ու հեռավոր ժողովուրդների հեթաթիների համայնման սյուժեների ընդհանրությունները բացահայտելիս հեղինակը տեսական ու մեթոդական հիմք է ընդունել Աարնե Թոմսոնի հեթաթիների միջազգային սյուժեների դասակարգման համացույցը:

Արևմտահայ ավանդական բանահյուսության առանձնահատկություններն ուսումնասիրելիս հեղինակն օգտվել է բանագիտության մեջ վերջին տարիներին կիրառվող քանակական վերլուծությունների հայկական տարբերակից (Ի. Լևին, Ս. Հարությունյան): Այն հնարավորություն է ընձեռել հեղինակին բանավոր ավանդության կարևոր իրողությունների [նյութի ձագման վայր, գրառման վայր, ժամանակ, բանասաց (սեռատարիքային խմբերով), ժանր, կատարման միջավայր, եղանակ և այլն], քանակական ցուցանիշների, միջանց միջև եղած ներթիվ հարաբերությունների բացահայտմամբ ցույց տալ նյութի կրթած փոփոխությունների պատկերը՝ ժամանակի ու տարածության գործոնների ազդեցության ներքո:

Ուշագրավ է, որ հեղինակը չի սահմանափակվել սոսկ Կիլիկիայի և Արևմտահայաստանի շրջանների ավանդական նյութերի վերահամայն խնդիրներով: Նրան հետաքրքրել են նաև քաղաքական փոփոխությունների բովանդակման արևմտահայ այսօրվա սերնդի բանահյուսական կերպը:

ու կերտվածքը: Պատահական չէ, որ Հեղինակը երբևէն չըջանցում է նեղ կիրիկյան բովանդակությամբ նյութերն ու ներկայացնում նաև այսօրվա իրադարձություններն արտացոլող նշանց բազմաբնույթ արձագանքները: Հեղինակն այս խնդրում ես ճիշտ մոտեցում է հանդես բերելու նրան, անշուշտ, հետաքրքրել է այսօրվա սերնդի կիրիկյան ավանդապատմության մակարդակը, նրանց ստեղծագործական կարողությունները, կենսունակությունն ու մշակութային հակամենեղը:

Տպագրված նյութերը հավաստում են, որ ներկա սերունդը, հատկապես վերջին շրջանում, ժողովրդի մեջ լայն տարածում գտած քաղաքական, հասարակական իրադարձությունների շուրջ ստեղծված բանավոր նյութերի ակտիվ կրողն է, պահպանողն ու փոխանցողը: Հեղինակը քանակական վերլուծման եղանակով նյութերի և քանասացների սեռատարիքային փոխհարաբերություններն ու ավանդապատմության հետ կապված որոշ օրինաչափություններ լուսարանելու նպատակով կատարել է նուրբ վերլուծություններ: Խորհրդանշական է, որ ժողովածուն ավարտվում է կիրիկիացու՝ Արցախին նվիրված սակցածագործությամբ: Դրանում մեծ խորհուրդ կա: Այդ վկայում է, որ աղբյուրն անմար դղացումը, անկախության, ազգային-ազատագրական պայքարի ոգին ընդլիար է առաջ բերել նաև կիրիկիացու հոգում: Քրանդի,—ինչպես հեղինակն է նշում,—արցախյան ազատամարտը մարմնավորում է նաև իրենց կորցրած երեմների քնորանի ազատագրման շիրականացած երազը...» (էջ 33):

Վերջին Սվազլյանը վերոհիշյալ ժողովածուի հրատարակությամբ դարձյալ շավարտեց իր ասելիքը: Մեծ եղևնի 80-ամյա տարելիցի նախօրյակին նա անմեղ նահապետների սուրբ հիշատակին նվիրեց իր «Մեծ եղևնի. արևմտահայոց քանավոր վկայություններ» գիրքը: Այն հեղինակի գրառած հայերեն և թուրքալեզու պատմական երգեր և վերապրողների հուշեր ընդգրկող մի ամբողջական հատոր է, որը սերունդներին է ավանդում Մեծ եղևնի ու դրան հաջորդող պատմական իրադարձությունների՝ ժողովրդական պարզ լեզվով լուսարանող վկայությունները: Գիրքն ունի կարևոր պատմաճանաչողական արժեք: 80 երկար ու ձիգ տարիներ են անցել, սերունդներ են հաջորդել միմյանց՝ հոգում անթեղված պահելով զապված, լուսվյալ մատնված ցավագին հուշեր:

Տարիների ընթացքում ձեռք բերած բանագիտական մեծ փորձն ու հմտությունը հեղինակի առջև լայն հեռանկարներ են բացել՝ լուրովի պարզաբանելու գիտակցում նշանակություն ունեցող որոշ խնդիրներ: Վերջերս Վերջին Սվազլյանի կողմից գիտական զեկուցագրի ձևով ներկայացված «Կիրիկիայի հայոց բանահյուսությունը» (ն., 1998) աշխատությունը եկավ լուսանելու, ամբողջացնելու և ի մի բերելու արևմտահայ ժողովրդագիտության համընդհանուր պատկերը: Հանրագումարի բերելով երեք գրքերում առկա ժողովրդագիտական նյութերի տիրարանական ու կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները, հեղինակը կատարել է բնագիտական, գրականագիտական, լեզվաբանական-բարբառագիտական, երաժշտագիտական, ժողովրդագրական, ինչպես նաև Մեծ եղևնի վերապրողների բարոյահոգեբանական ապրումները վերլուծող նոր բնույթի պրպտումներ, նորովի լուսարանել իր իսկ կողմից գրառված նյութերի ներքին բովանդակությունը: Մեծ եղևնի 82-րդ տարելիցի նախօրյակին 22 ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը լույս ընծայեց ժողովրդագետ Վ. Սվազլյանի «Մեծ եղևնի արևմտահայոց հուշապատմություն և թուրքալեզու երգերում» ամփոփ աշխատությունը: Այնտեղ ընդգրկված են Մեծ եղևնից մազապուրծ Արևմտահայաստանից, Կիրիկիայից և Անատոլիայից տարագրված ականատես-վկա հայրենագարձներից հեղինակի զրի առած ժողովրդական հուշապատմությունն ու թուրքալեզու երգերը: Պատմագիտական և ժողովրդագիտական տվյալների համադրությամբ հեղինակը ներկայացրել է արևմտահայության կրթած անասելի տառապանքները՝ սկսած 1909 թ. Աղանայի կոտորածից մինչև 1922 թ. Զմյուռնիայի աղետը: Պատմագիտագրական բացառիկ արժեք ներկայացնող այդ նյութերը ժողովրդական պարզ լեզվով, բայց և առարկայական ճշմարտացիությամբ վերարտադրում են թուրքական կառավարության կազմակերպած զորահավաքի, բռնազաղթի, քարդի ու կոտորածի դավաճները: Աշխատության մեջ տեղ են գտել նաև բոնոլիան զեմ ծառացած հայ ժողովրդի ոգորումները, ինքնապաշտպանական կռիվներում մարտիրոսացած հայ հերոսների սխրագործությունները: Պատմական անհերքելի իրադարձությունները զեղարվեստորեն և փաստագրական հավաստի վավերագրերով լուսարանող սույն աշխատությունը ճանաչողական արժեք ունի մանավանդ այսօր, երբ թուրքական պատմագիտությունը ճշնում է խեղաթյուրել ճշմարտությունը՝ ցեղասպանության փաստը նենդափոխելով որպես ժամանակի թելադրանքով կատարված տեղահանություն:

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական դիտությունների թեկնածու